

խակ կենդանականը երկրաչափական յառաջա-
տուութեամբ: Այս յառաջատուական տարբերու-
թեան տրամաբանական հետեւանքն այն է որ
միջոցներու եւ պէտքերու միջեւ հաստատուն ան-
համեմատութիւն մը կը տիրէ միշտ: Այսպէս, մէկ
կողմէն պէտքերու գերազանցութիւնը, եւ, միւս
կողմէն, միջոցներու անբաւականութիւնը հարկա-
ւորաբար կը խանգարեն կենդանական թագաւոր-
ութեան մէջ տեւական ներդաշնակութեան մը
հաստատումը. բայց բնութեան նպատակը գեղեցիկ
ներդաշնակութիւնն է: Գէթ այսպէս կարելի է
հետեւցնել տիեզերքի տեսիլէն: Այս արդիւնքին
հասնելու համար ուրեմն անհրաժեշտ է որ պէտ-
քերուն մէկ մասը ջնջուի: Ատկից՝ կոխը անհատ-
ներու միջեւ: Սակայն անհատներու մարտիկ
կարողութիւնը յարաբերական է. ոմանք զօրաւոր
են, ոմանք՝ սկաւր:

Ուրեմն կոխը մէջ տկարին ջնջումը ան-
խուսափելի է: Բնութեան գործելու այս եղանակը
կը կոչուի բնական ընտրողութիւն:

Այսպէս, զիտող մտքին համար բնութիւնը
ուրիշ բան չէ՝ եթէ ոչ ասպարէզ մը մշտ շնորհակա-
նութեամբ պատերազմի: Ինքնապահպանման
բնական անդամադրելի կերպով կը մղէ բոլոր տե-
սականները գոյութեան պայմաններուն տիրանալու,
եթէ կան. հակառակ պարագային զանոնք ստեղ-
ծիլու: Նոյն միջոցներուն հետապնդող տեսակներու
միջեւ ընդհարումը կ'աւարտի մէկ մասին անհե-
տացմամբ. եւ տկար տեսակները՝ պարտեալ՝ կը
չիջանին, մինչդեռ զօրաւորները՝ յաղթական եւ
տէր՝ ապրելու միջոցներուն, կը յարատեւեն իրենց
կեանքը: Այս է անհրաժեշտ օրէնքը:

Արդ, մին այն անհրաժեշտ ճշմարտութիւննե-
րէն — զորս ժամանակակից մտածումը կը պարտի
Իրականութեան յաղթանակին, սա է. բարոյական
կարգը շարունակութիւնն է Ֆիզիկականին, եւ
այս երկու կարգերը որոնք իրերու բովանդակը
կը կազմեն, կը հպատակին միեւնոյն անյեղի եւ
չնդհանուր օրէնքներուն. բնութեան ֆիզիկական
օրէնքները կը կառավարեն նաեւ մարդկային ըն-
կերութիւնը: Իրականութեան մէջ նոյնպէս, իրա-
պաշտ Դպրոցը այս ճշմարտութեան վրայ հիմնե-
ւած է: Առաքինութիւնը — կ'ըսէ Բօլ Պուրթէ իր
քննադատութեան մէջ Ջօզաֆի վրայ — այնպէս
պէտք է բացատրել ինչպէս քիմիական մը կ'ընէ
վիթրոլին կամ շաքարին համար, զոր օրինակ:

Ուրեմն, մէկ բանով ճարտիկականութիւնն է
որ կը վարէ անհատներու ինչպէս ժողովուրդներու
կեանքը: Արդէն իրականութեան տեսարանը կը
հաստատէ ինչ որ տրամաբանութիւնը այս կեր-
պով կ'ըզրակացնէ: Կը բաւէ ակնարկ մը նետել
մեր շուրջը: Ամէն ինչ կոխ է. ամէն ինչ ան-
հաշտ հակառակութիւն մը կ'արտաշնչէ:

Այն շքեղ էջը — որ Հիւկօ իր բուսաբանութեան
մէջ կը նկարէ ծովն ինկած մարդը որ զիւրազնա-
կան ճիւղերով կը մաքստի կանանչ ամուսի ալիք-
ներուն դէմ, որ յուսահատական կերպով կը տիրէ
նաւուն անհրաժեշտ մը, եւ որ վերջապէս,
ուժասպառ կ'ընկղմի անյատակ անզուսկին խորը —
մեր դարուն իրական կեանքը կը խորհրդապատ-
կերէ: Նմանապէս այս երեւոյթն իսկ է ինչ որ
տեսնական կեանքի մէջ կը կոչուի մեղմաբա-
նութեամբ ազատ մրցում: Բիւրաբաւ, հրէայ նշա-
նաւոր անտեսակտը, առաջին անգամ մատնանիշ
ըրա. հետեւեալ իրողութիւնը. իրերու արդի ըն-
թացքով, գրամագրութիւն եւ աշխատութեան միջեւ
անջրպետ հեռացումը կը լայնանայ. հարուստները
հետզհետէ աւելի կը հարստանան, իսկ ընչազօրեկ-
ները աւելի կ'աղքատանան:

Ազգերու ճակատագիրը նաեւ չիւղեւորներ այս
աղիւտաբեր օրէնքէն: Գարնանածաղկի (*) ընկե-
րութեան մէջ, երկու տարի կայ, Անգլիոյ նախա-
րարական ըսաւ. Լոնտոնի գրամատէրներու կող-
մէ տրուած ուսնական խնջոյթին առիթը. «Պէտք
է ի նկատի ունենանք սակրողութիւնը. մեծ ազ-
գերը երթալով կը զօրանան, փոքր ազգերը հետ-
զհետէ կը տկարանան եւ իրենց անհետացումը
ճակատագրական է: Պէտք է պատրաստ ըլլանք
ժառանգութեանց մեղ ինկած բաժինը պաշտպա-
նելու համար»:

(*) Primrose League Անգլիոյ պահպանողա-
կան կուսակցութեան Գլխակն է:

Դիւրին է ըմբռնել որ այս վարդապետութե-
ան ստոյգութիւնը՝ ճամբան հետո չէ: Արդարեւ
եթէ ճիշդ է որ սկարին ջնջումը բնութեան օրէնք-
ին համեմատ անհրաժեշտ է, ուրեմն գիտութիւնը
պարտաւոր միջոց մը չէ որոշեալ նպատակին հաս-
նելու համար, եւ գիտնէր որ Մարկոս Աւրելիոս,
Եպիկոտէս — Չինոնի վարդապետութեան այդ
փայլուն կողմնակիցները — արհամարհելի սկաւր-
քիւն մը կը նկատեն այդ զգացումը: Անգլո-
թիւնը, Հռոմայեցիները կը նկատէին իբրեւ զօ-
րաւոր նկարագրի նշան մը, իբրեւ բարոյական
կորով մը: Բրուտոս, որ իր զաւակները պայանել
տուաւ, կաթոն, որ անձնասպան եղաւ, այս ոգիին
գերագոյն արտայայտութիւնն են:

Նմանապէս, եթէ ճիշդ է որ ուժն է բաւարար
եւ անհրաժեշտ պայմանը յաջողութեան, ուրեմն
պէտք է որ անհատը — եւ հոս խնդիրը մարդկային
էակին վրայ է — պայքարին նախապատրաստու-
թեան գործին մէջ միակ մտանդութեան առար-
կայ ունենալ իրեն համար, անձին ազատագրութիւնը
իր ուժերը շղթայող կապանքներէն: Որովհետեւ
ճշմարիտ ուժը բարոյական է, իրական ուժը՝ իբի-
նացիոնիւնն է (possession de soi-même) ք Ա-
ռանց այս թանկագին կարողութեան, գերի ենք
մեր զգայնութեան, որ, իր կարգին, կատարելա-
պէս արտաքին աշխարհի աղբեղութեան տակ՝ կը
գտնուի, եւ Դիպոնտին քանաճարներէն կ'ըն-
դունի իր բարոյական շարժումները ք Շնորհիւ
ինքնատիրութեան, բոլոր զգացումները եւ բոլոր
կիրքերը այն չափով եւ այն ատեն կ'աղգեն կեան-
քի ուղեգծին սովորական ընթացքին վրայ, ո'րչափ
եւ ո'ր ատեն հարկաւոր կը դառնէ ցուրտ հաշիւը:

Հոգեկան այս ազատագրութիւնն է որ կը
պարզեւէ ուրախութեան մէջ շափաւորութիւն,
աղէտքին առջեւ պարզիւն հանդարտութիւն,
բարկութեան եւ նախանձի համար անզգայ ան-
տարրերութիւն:

Այս իսկ է զոր հեթանոս մտածողները կ'ան-
ուանէին իմաստութիւն, եւ զոր արդի Անգլիացի
մատնագիրները կը կոչեն Կամք:

Ստոյգութիւնն է ճարտիկականութիւն — ա-
հաւաստիկ Բիթանական նկարագրին պերիզանցու-
թեան էական գիծերը: Տկար պարտի տեղի տալ
զօրաւորին — ահաւաստիկ Սլափիոնի պետական մար-
դոց անասան համոզումը անյուր վիտերով կը
ջանան ապացուցանել այս անգամ ի վնաս Հռոմա-
ական այդ երկու հանրապետութեանց թրանս-
վալի եւ Օրէնձի, որոնք, ձախայն շնորհիւ իրենց
ազգական արժանիքներէն, հետապետութեան,
անվերջ արիւթեան եւ տաք անկախապարտու-
թեան, արդէն ապացուցին թէ բանակը ոչինչ է
ընդհակառակը ռեալի է զօրութիւնը. թող ուրեմն
Գրոսթէներու եւ ժողովներու այդ վստմ ու ան-
րոսական դիմադրութիւնը նոր խանգով մը երի-
տասարդացնէ փոքր կարծուած ժողովուրդներու
ինքնավստահութեան հաւատքը: Ա. ծ.

ԶՐԿԱՆՔ ԶԷ՝

... Խմբագիր .

Անցեալ չորեքշաբթի օր ՎՅ/28 Փետր. ազգա-
յին Առաջնորդարանի շրջափակին մէջ տեղի ունե-
ցած է վաճառման գործողութիւնը՝ հանգուցեալ
մտերիմներէս միոյն թողած գոյքերուն, որուն
հետ կը գտնուին եղբւր ուրիշ երեք հանգուցեալ
անգլիներու ալ թեթեփներն:

Հանգուցեալ մտերիմ գոյքերուն վաճառման
գործողութեան տեղեկութիւն չ'ունենալով ներ-
կայ չ'գտնուիլս, բնական է թէ մեծ վիշտ պատ-
ճառեց ինձ եւ անիթ եղաւ Առաջնորդարանի մէջ
կատարուած այդ գործողութեանց մանրամաս-
նութիւններովն: Կատարուելու եւ տեղեկացայ
թէ՝ արդարեւ ինձ նման շատ ազգայիններ ալ
տեղեկութիւն չ'են ունեցած եւ ներկայ չ'են եղած,
որով վաճառման գործողութիւնը շատ սահմանա-
փակ թուով անձերու ներկայութեան կատարուած
է եւ հետեւաբար ծախուած ապրանքներն ալ շատ
ոչինչ գին բռնած են, այսինքն իրենց իրական
արժեքէն քանի մը անգամ պակաս:

Մեր նախնիքները աւած մը Կենին, որ կ'ըսէ.
«Մեռած մարդուն ստացուածքն ալ իր հետ կը

մեռնի». այս խօսքին ստուգութեանը վրայ կաս-
կած ունեցողներն Առաջնորդարանի թեթեփներու
տեսարակները թող քննեն եւ պիտի համոզուին
թէ մեր նախնիք չ'են սխալած:

Առաջնորդարանը՝ որուն հսկողութեան յանձ-
նուած է այս փափուկ գործը, եւ որուն մէջ կը
բովանդակի միանգամայն շատ մը որբերու իրա-
ւանց պաշտպանութեան խնդիրը, կը տեսնուի թէ
խղճի մտքը ի զուտ չ'հաներ այս գործը եւ իրա-
ւամբ մեր ազգայնոց գանգատանայ եւ դիտողու-
թեանց պատճառ կուտայ:

Լաւագոյն չէ՞ր, որ Առաջնորդարանը 10—15
օրեր առաջ «Արշալոյսի» (1) մէջ հրատարակէր թէ
այդ տեսակ բան մը տեղի պիտի ունենայ Առաջ-
նորդարանի մէջ, որով մենք ալ տեղեկութիւն
չ'ընայինք ունենալ եւ ներկայ գտնուիլ:

Իրաւ է թէ, ինչպէս տեղեկութիւն առիւ Ա-
ռաջնորդարանը երկու օր առաջ ազգարարութիւն
մը եկեղեցոյ դուռը եւ անոր նման հատ մ'ալ
հայոց սրճարանը կախած է եղեր, բայց ստորա-
գրեալս եւ ինձ նման շատեր ալ թերեւս, իրենց
զբաղմանց չ'ներելուն պատճառաւ այդ երկու տե-
ղերն ալ չ'գնացած կրնան ըլլալ. մինչդեռ Արշա-
լոյսի մէջ ապահով ենք որ չ'կարողացող շատ քիչ
կայ Գահիրէի մէջ, եթէ նոյն իսկ մի քանակէն
քաղած ըլլայ այդ ընթերցումը . . .

Արդ, կը հարցնենք Ձեզ եւ Ձեր ընթերցող-
ներուն թէ՞ լրկանք մը չէ՞, գրեթէ լրիկ մեջիկ
այս եւ այն հանգուցելոյն գոյքերն շատ պակաս
գնով վաճառելու պատճառ դառնալ եւ հանգու-
ցեալներուն խեղճ ու ողորմելի որբերը զրկել
քանի մը դուռ աւելի ստանալու իրաւութիւն
իրաւունք մը՝ որուն ամէն ժամանակէ շատ աւելի
պէտք ունին պանդխտութեան մէջ մեռնող տա-
րաբաղդ հայրերուն կարօտով մաշող զաւակներն:

Խնդրեմ, Տէր Խմբագիր, ներկայ գրութեանս
անկիւն մը շնորհիւ հաճեցէք Ձեր օգտաշատ թեր-
թին մէջ եւ ընդունեցէք եւայլն եւ այլն:

Յ. Կ. Շ.

ԳԻՐԻՔ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ շրջակայից գրասէր Հայ
հասարակութեան գիւրքութիւն մը տալու
մտքը՝ կը ծանոթցուի թէ Հայերէն ամեն
գիրք, (Դասական, Խորհրդական, Գիտական,
Գրական, Արուեստական, Բանասիրական,
Վիպական եւայլն) ոչ հրատարակուած են
եւ կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երու-
սաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա,
կարելի է գիւրքամատչելի պայմաններով
ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասար-
դեանի, Գալստեան վարժարան հայոց
ի Գահիրէ:

ՅԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ ՅԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Մեր թերթը մամուլին յանձնելու պա-
հուն կը տեղեկանալք թէ՛ Տիար Խ. Փա-
սուլեանեան հանրածանօթ դերասանապետը
Աղէքսանդրիա մեկնած է, ի նպատակ իրեն
ներկայացում՝ յիւ տալու նպատակաւ:

(1) Պէտք է գիտնալ թէ «Արշալոյս» ազգ.
Առաջնորդարանի գործերը անհատական քննա-
դատելուն համար շատ հաճելի չ'երեւար անոնց
աչքին եւ չ'են ուզեր «Արշալոյս» ի հետ ի պաշտօնէ
գործ ունենալ: Անոնց փնտրածս եւ սիրածս հեղ-
ծիքի մարմնացումներն են եւ այդպիսիներ ալ
չ'են պակաս զիրենք շրջապատելու համար. . .

Առաջնորդարանը կարող էր սակայն, եւ պէտք
էր որ գտնէ շատ թուով ազգարարութիւններ
ցրուէր հայ ժողովուրդին մէջ եւ ջանար շատերու
ներկայութեան կատարել վաճառումներն. այսպէ-
սով մեծ յոյս ունինք թէ ծախուած ապրանքներն
շատ աւելի արդիւնք կրնային արտադրել, քան
ինչ որ արդի վաճառման ձեւով ձեռք բերուած է:

... Ինչպէս պայմանաւորուած է ինչ

Ազգ. քսանդրիոյ ազգային ք. և անոնց թելադրութեամբ օտարներն իսկ, Զիդի- նիայի հանդէսէն ի վեր մեծ համբաւ կը վայելեն թէ քաջաւերել զիտեն, եթէ ուզեն:

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ

ԼՈՆՏՐԱ, 28 փետրվար

Կաթալի մէջ կատարի կռիւները կը շարունակուին « Ռուսական իննիսքիլինկ » հրահանակիրները շարաթ գիշեր տեղի ունեցած յարձակումի մը մէջ ահագին կո- ճուստներ կրեցին: Յաջորդ օրը զինադադար մը ունեցան մեռելախնոր թաղելու համար:

Պրապան գնդապետը գրաւեց ձէյմա- թովը, ուր ստուար թուով ձիեր ձեռք առնուց:

— Տէյլի թէլէկրաֆ կը ծանուցանէ թէ Կիյեով Կայսրն և Ռուսիայի թագաւորը շնորհաւորական հեռագրեր ուղղած են Անդրիոյ թագուհւոյն, Բարդաղէրկի մէջ անդրիայոց ունեցած յաջողութեանը հա- մար:

Լորէնսո-Մարքէլ 2 Մարտ.

Նախագահ Քրիլկէր մեկնեցաւ, նա- խագահ Սթէյնի հետ խորհրդակցելու հա- մար:

Լորէնսո Մարքէլէն Թայնզի ուղղուած հեռագրի մը նայելով, իրազէկ անձինք երկու նախագահներու այս տեսակցութեան մէջ, հաշտութեան նախաշաղկը կը տեսնեն:

Սիմոնթով, 3 Մարտ.

Զօրավար Քրոնտ և իր ընտանիքը, Տօրիս պնունով պատերազմական նաւը փոխաւ գրուած են:

— Գօլէսպէրկի Պօլէրները Սալաա Տէ- րութեան մէջ մնան:

ԼՈՆՏՐԱ, 5 Մարտ.

Նախագահ Քրիլ կէր այցելութիւն տուաւ նախագահ Սթէյնի: Այս այցելութիւնը հաշտութիւն առաջարկելու համար կատա- րուած խորհրդակցութեան մը կը վերագրեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒԱ.— Մանչեսթըրի Պարսիսն կի- մանայ թէ թուրք կառավարութիւնը որոշած է 86 հատ արագահարուած ֆրոպի թնդա- նօթներ գնել:

450,000 մալքերեան հրացաններ արդէն գունդերուն բաժնուած են և ասոնցմէ

250,000 հատ ամբարձած են Պօլսոյ միտե- րանոցներուն մէջ և դիտաւորութիւն կայ կ'ըսէ նոյն թերթը, միևնոյն տեսակէն 220,000 հատ ալ գնել:

Այս թերթը հրատարակող տպարանին մէջ, ինչպէս կ'իւրեւիտաւ քանակութեամբ թուանշաններ կը գտնուին եղեր . . . :

— Եւրոպացի լրտեսի մը տուած տե- ղեկութեանց յենլով, օտտիկանութիւնը բան- տարկեց Լոնտոնի Օսմանեան դեսպան Միւ- զիւրիւս փաշայի փեսան Միւզիւրիւս պէյը, ինչպէս նաև Իքիասիս էֆէնտի՝ որ ներքին գործոց նախարարութեան նախկին մասնա- ւոր գրագիրներէն է:

ԱՄԵՐԻԿԱ.— Թէ ամերիկացիք որքան մեծ սէր ունին ծանուցումի՝ ամենուն յայտնի է: Բայց ով մտքէն պիտի անցուներ թէ մինչև գերեզմանատունները անգամ իրենց շահուն գործածեն: Նիւ-Եօրքի մեծ գերեզ- մանատուններէն միոյն մէջ, տապանաքարի մը վերայ հետեւեալ գրուած է. « Աստ հանգչի ձոն Սմիթհ. գործածած ատրճա- նակը Սիւքքեմ Կօյէ ի տեճակէն է, որ զինքը վայրկեանապէս գետին տապալեց. յուսա- հասնեալու համար յաւազոյն գեղեցիկ է: »

Ուրիշ շքեղ այլ անճաշակ շիրիմի մը վերայ սա տապանագիրը կայ.

« Այս քարին տակ պիտի հանգչի օր մը ձոն Պոլթըն, որ այժմ կը վարէ կաշիի մեծ վաճառատուն մը, 159-դ Պողոտայ, թիւ 57: »

Վերջապէս Բէնսիլվանիոյ մէջ գերեզ- մանատան առաջ խոշոր գրերով գրուած է. « Եթէ կ'ուզէք այս շրջափակէն դուրս մնալ, ձոնն Լակեյտայի ի ըմպելիքը գործածե- ցէք: »

ԳԵՐՄԱՆԻԱ.— Պեռլինի մէջ էնֆլիւէն- ցայի համաճարակ կայ. կայսերապետն իշ- խանք, Օսկար և Եօաքիմ, անկողնոյ կը ծառայեն. կայսրուհին, իւր որդուցը հիւան- դութեանը պատճառաւ, չի կրցաւ կայսեր ընկերանալ ի Հիւպէրգըստօք:

ՌՈՒՄԱՆԻԱ.— Պուրէշի մէջ ոճիր մը գործուեցաւ որ ամբողջ քաղաքը յուզեց: Քիչ օրեր առաջ քաղաքին փողոցներէն միոյն մէջ անձ մը կը գտնէին արիւնա- թաթաւ վիճակի մէջ: Դատական քննութենէ մը հաստատուեցաւ թէ՛ այս անձ պուլկար մ'էր Ֆիլիթովքի անուամբ: Թուրքիոյ ծա- ռայութեանը մէջ գաղտնի լրտես, և որ Վուաս իլիէֆ Պուլանօֆ անուամբ ուրիշ պուլ- կարէ մը սպաննուած էր. այս վերջինը

Մակեդոնիոյ Պուլկար ազգային մասնախումբ- րին հրամանէն վերայ շարժած էր:

Իլիէֆ Ներսիսյանը ամբողջովին խոստովանեցաւ ոճիրը: Յայտարարեց թէ՛ իւր ըրածը արդար էր և հայրենասիրական գործ մը: Ֆիլիթովքի թուրք կառավարու- թեան մօտ իւր ըրած լրտեսութեամբը, մեծիկ չարիք հասուցած էր, Մակեդո- նիոյ շատ մը Պուլկարացիք ստիպուած էին Ռուսական փախչիլ: Նոյնպէս յայտարարեց թէ Սթամպուլի սպաննիչը ինքն էր: Արդ, Սօփիայի մէջ ժամանակին անձ մը գլխատուե- ցաւ իրչի Սթամպուլի սպաննիչը. բայց միշտ սա համոզումը կար թէ՛ ուրիշ յանցաւորներ ալ լինելու էին:

Իլիէֆի ոճիրը և իւր յայտնութիւնք մեծ յուզում մը յառաջ բերին: Մակեդո- նիայի Պուլկարաց մէջ շատ մը ձերբակա- լութիւններ կատարուեցաւ: Կ'ենթադրուի թէ Իլիէֆ մեղսակիցներ ալ ունեցած լինի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 23 Փետր.

ՊԱՐՍԻՍԿԱՆ ԳՆՆՈՒՄԻՐԸ

Լոնտոնայէն մեղի հետեւեալ տեղեկու- թիւները կուտան Պարսկաստանի մասին:

Երկար ժամանակէ ի վեր Ռուսաստան Պարսկաստանի հետ բանակցութեան մէջ է, նա ստիպուած էր մինչև ատտիճան մը Սեժն Բրիտանիոյ գործակցութեան ընդունիլ, յետոյ, յանկարծ Թրանսօլալպատեանումին պատճառաւ Ռուսաստան արիթ մը գտաւ առանձին գործելու և այդ մտիթէն այնպէս օգտուեցաւ որ ամենուն զարմանք կ'ազդէ: Այստեղ ոչ ոք կը կասկածի թէ Ռուսիայի բարձր գործերն ուղղուած են ընդդէմ Անգլի- զիոյ, կը պատմեն թէ կոմսն Մալերովիէֆ մինչև վերջին վայրկեանը Անգլիոյ Կեպա- նին հաստացրեցեր է թէ բանակցութիւն- ներն միշտ առաջուան ուղղութեամբ առաջ կ'երթան և թէ իրեն ըւր պիտի տրուի եթէ նոր բան մը տեղի ունենայ: Սըր Սթօթ Journal officiel էն իմացած է թէ բանակ- ցութեանց ձեւը փոխուած է և շատ դժու- հութիւն յայտներ է: Կրտուի թէ միայն Ֆրանսայի Կեպանը խնդրէն տեղեկութիւն ունի եղեր և պատրաստ պէտք եղած դրա- մական օգնութիւնն ընելու Պարսկաստանին: Բայց ինչպէս Պարսկաստան Անգլիոյ պարտատուն եղաւ:

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ


ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՅՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեաներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա- բաժինները: Ապահովագրեաներուն արդէն յիշարած է կամի նպատ- իրենց գծմարտած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ անշարժի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն- ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ: ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱզգ. քսանդրիա:

Վ. Ա. ՃԱՍՏՈՒՆ ԹԵՅԻ

Գ. ԻՍԱԿՈՒԼԵԱՆ ԸՆԴ
ՇԱՐԻ-ԱՊՏԻԻԼ-ԱԶԻԶ



Քանի մը տարի առաջ երբ Պարսից Շահը Էնտոն ճամբորդութիւն մը ըրաւ, Պ. Թալլոս Վեհապետին ծառայեց մեծ խր- նամքով. Շահը ուզելով իւր երախտագի- տութիւնն անոր յայտնել, ուզեց անոր շքանշան մը տալ. Պ. Թալլոս մերժեց այդ պատիւն և ի փոխարէն ինդրեց Պարսկաս- տանի ծխախոտի մծնօփօրը, Շահը անմիջապէս շնորհեց այդ խնդիրը. Քանի մը ամիս վերջը նոր պաշտօնակալը Թէհրան կը հասնէր իւր մարդիկներով. հոն տուն մը կը գնէր և Կ'սկիւէր իւր գործունէութիւնն գործածել շատ մը հրեայ գործաւորներ և պաշտօնեա- ներ ծխախոտի վրայ հակելու և հարկերն հաւաքելու համար:

Ասկէ առաջ եկաւ խրատում մը որ քիչ քիչ յիշատիւթեան կը փոխուէր, կրօ- նական մասը Անգղիոյ և հրէաներու դէմ քայտղեց, ժողովուրդը քանի մը օրէն պատրաստուած բոլոր ծխախոտն ոչնչացուց, Թէհրանի մէջ Շահին պալատը պաշարեցին և սպառնալիքներ ըրին Կայսեր դէմ, Շահը ճարահապ ստիպուեցաւ 500,000 ֆրանք խոստանալ Անգղիական ընկերութեան 6 0/0 տոկոսով, որն Անգղիոյ պիտի հայթայթուէր հարուստ գաւառներէն գոյացած մաքս- վճարներէն: Ահա այս կերպով Պարսկաս- տանի մէկ մասը Անգղիոյ տեսակ մը հպա- տակութեան տակ կը մնայ:

ՀՈՋԱԿԱՒՈՐ ՏԱՐԵԿԱՐՁ ՄԸ

Երեկ երեկոյ Օթէլ Գոնթիւնանթայի մէջ տեղի ունեցաւ Դէսրդ Ուաշինկիթընի 168րդ տարեգարծի տօնը: Այս ուրախութեան ձեռնարկողներն էին ամերիկացոց համալ- սարանական Ակումբի անդամները, ընդ նա- իսապահուած գործակալ Հօրաս Փօրթէր, Միացեալ Նահանգաց Դեսպանին: Տօնը սկսաւ հացկերոյթով մը որուն կը մասնակ- ցէին ֆրանսացի համալսարանականներ և կըր- թութեան Մինիստր՝ Պ. Լէյկ. ինչպէս նաև ուրիշ բարձրաստիճան պաշտօնականներ:

Շտաբանիայի ժամանակ Ամերիկայի Դեսպանը բաժակահաճա մը խօսեցաւ և խմեց Միացեալ Նահանգաց Նախագահ՝ Պ. Մաք- քիլիյի և Պ. Լուպէյի կենացը, Դեսպանը յետոյ խմեց Թրանսայի համալսարաններուն և Պ. Լէյկի կենացը:

Պ. Լէյկ օտքի ելլելով Թրանսայի և Ամերիկայի համալսարաններուն գովեստն ըրաւ և խմեց անոնց առաջադիմութեան և բարեկաւութեան համար:

Ուրիշ շատ մը բաժակներ առաջար- կուեցան և ոգևորեալ ծափերով կոնծուե- ցան: Հացկերոյթը վերջացաւ ամերիկայի ուսանողներուն հայրենասիրական երգերով հացկերոյթէն յետոյ գեղեցիկ և փայլուն նուագահանդէս մը տեղի ունեցաւ:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 5154 7133 1737 1042 2068 7985, 444 9472 5553 4672 57 9706, 1399 1795 2794 4541 8002 4220, 8760 759 4139 3231 7645 8027, 6104 6779 6228

Թէյի գործածութեան ընդհանրանա- լովն, թէյի ճաշակն ևս նըբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է զը միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառու- թեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քանանակ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մաս- նաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազ- մազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չիչ ՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՄԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍ- ՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձը- մեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարի մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու նծունի, կօխի և գնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻԻԿ Դրամով յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

22 30

ՏՕՐՔՐՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առավարձող Ապօրին Եւրոպայի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա- սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղանքեր:

Կը դադարեցնէ վայրկենապէս ակուայի ցա- ւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած գեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե- սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղանքներուն տոկունու- թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երձօյնաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4-5:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԿԻՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Օրօգի Պալ վաճառատան մօտերը, Կամէ-ի-Պէնարի հիւսիսային

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւն- ներէն քաջալերուած, պատիւ ունին յայ- տարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատ- րաստուած ընտիր հացերը զուտ և անխար- դախ ախրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակիւն մէջ անմրցելի ըլլալու պայ- մանաւ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարբերականներ և այլն:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձ- նարարութիւնը ամենայն ճշ գութեամբ և փութով կը կատարուին: 33-50

ԿՈՊԷՆ ՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԶԱՏՈՒՆ

Տասներկու տարինը շարունակ կազմուող լու- սանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ ձեւով և փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապուլլաճ եղբայր անն, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուներով, քաղաքին մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ անձնա- կարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործա- տեղի մը կը հիմնէ Եպիֆիլի Եարիա Գամմիլ Օւ թէլ ՇէթէրՏՍԻ ճիշդ դիմաց թիւ 3 արարթում- նին երբորոք յարկը ուր կը պատրաստէ լուսա- նկարներ, ինչպէս և դուրսը կոուփներ ի հարկին: Ակրանիսարման բնական մեծութեամբ և Կենդանադիւրներ ամերիկեանց մեքենայով, ո- ռոնք երբէք չեն աւուրի:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեարիւր:

Իւղաներկ և ջրաներկ պատկերներ, և շէն:

Լուսանկարի և պատկերահանութեան վերա- բերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր- քուս, օտարերկրացի և շէն:

Իրեն դիմող յաճախորդներն հանկու առած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք և կատարելապէս գէ՛ն պիտի մնաք:

ՓԱՓԱԿԱԿԵՐԱՑ ԱԶԲԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆՓՈՒԹ ԾՆՆԵԿ

Որ Կ. Պօլսոյ Բերայի Հալիպ Զարքարին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հոչակ հա- նած է, այս անգամ Ապուլինի Պահականոցին դիմա- ցի անկիւնը խանութ բացած է և կը պատրաստէ տեսակ տեսակ համեմալ քաղցրուէնիք, խմորե- ղէնք ամենպիսեալ և ընտիր իւզով:

Հոն դիմող յաճախորդներն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարանիքներու, երեկոյթներու և հրաւէր- ներու համար պէ՞տք եղած անուշեղէն—խմորե- ղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ և դիւրամատչելի գներով: